«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ավետիք Իսահակյանի քնարերգությունը սիրային նամականիի ուղեկցությամբ

ԱՌԱՐԿԱ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Օվսաննա Ասատրյան

ՄԱՐԶ ք.Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հանրապետական N1 հատուկ կրթահամալիր

Բովանդակություն

Ներածություն----------3

Ավ.Իսահակյանի սիրային քնարերգությունը----------4

Ավետիք Իսահակյան և Շուշանիկ Մատակյան----------5

Ավետիք Իսահակյան և Աննա Մատակյան----------10

Ավետիք Իսահակյան և Ջավահիր Ներսիսյան----------13

Եզրակացություն----------14

Գրականության ցանկ ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ավետիք Իսահակյանի քնարերգությունը սիրային նամականիի ուղեկցությամբ» թեմայի ընտրությունն արդիական է այնքանով, որքան որ նամակը որպես հաղորդակացման միջոց այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը, իսկ հեղինակի սիրային քնարերգությունն առավել հասկանալի կարող է լինել անձնական ապրումների արտահայտություն հանդիսացող նամակների համադրությամբ: Յուրաքանչյուր մարդ, երբ նամակ է գրում մեկին, լինում է նրա և իր հետ առավել անկեղծ, մաքուր, անմիջական, չմիջնորդավորված: Ավետիք Իսահակյանի դեպքում նամակներն ու բանաստեղծությունները կարծես մեկը մյուսի շարունակությունն են կամ սկիզբը:

Թեման արդիական է նաև այնքանով, որքանով արդիական է Իսահակյանն իր անսպառ ու տիեզերական սիրով. սիրո տարաբնույթ արտահայտություններով՝ հայրենիքի,մոր, բնության, հակառակ սեռի և առհասարակ մարդու նկատմամբ….

Աշխատանքը նպատակ ունի գլուխներից յուրաքանչյուրում ներկայացնել Ավետիք Իսահակայնի երեք մեծ սերերն ու դրանցից ապրած հիասթափությունները բանաստեղծություններում և նամակներում:

Աշխատանքը կնպաստի հեղինակի անսպառ սերն ու դրա հասցեական տիրոջը բացահայտելուն, առավել լավ հասկանալուն Ավետիք Իսահակյանի սիրային քնարերգության ակունքները, ոգևորություններն ու հիասթափությունները:

Անաղարտ, մաքուր, անկաշառ, փոխադարձ սիրո փնտրտուքի հետևից գնում, անհասանելիին ձգտում ու, չհասնելով, տառապելով, իր հոգու անսահման խոր խորքերից, երկնում և իր ստեղծագործական արարչագործությամբ քնարերգության գոհարներ է ստեղծում բանաստեղծը , որոնք գերում են մեզ, դառնում են մերը՝ պահպանելով իրենց խիստ անձնական լինելը:

Ավետիք Իսահակյանի սիրային քնարերգությունը

«Ես երգիչ եմ –երկնի թիթեռ,

Ես զանձ չունեմ-լե՛ռ ու բե՛ռ.

Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,-

Ծաղկի բուրմունք,կույսի սեր.

Ես սիրում եմ մրմունջ-տրտունջ,

Տանջված սրտի երգ ու վերք»:

Այսպիսին է Ավետիք Իսահակյանը՝ սիրառատ, բարի, կենսատու և հորդաբուխ աղբյուրի նման՝ կարկաչուն, ջինջ ու անապակ: Եզակի են տիեզերական անսահամնության հետ ներդաշնակ ապրող ու արարող անհատները, նրանց է տրված իրենց յուրաքանչյուր նյարդով և բջիջով զգալ ու ապրել անսահմանությունը: Ապրել, զգալ, խորհել ու խոկալ, սիրել ու սիրել, կրկին սիրել իրենց հոգուն հատուկ ներքին հարստությամբ, ամբողջությամբ, անմնացորդ: Այդ եզակիներից է Ավետիք Իսահականը, որը չհանգչող հրաբխի նման ժայթքում է սեր, սիրտ ու զգացմունք: Հորդում է անսպառ աղբյուրի նման և չի կարող չարարել, քանի որ արարման պահանջմունքը տված է նրան և այնքան բնական է տրված, որ կարծես անբաժանելի մի միասնություն են կազմում, զարմանալի մի մասնություն , որում մեկն առանց մյուսի չկա: Յուրաքանչյուր մարդու համար սիրո մի առանցք կա, որի շուրջը պտտվում է աշխարհը, որի լույսի տակ են երևում մարդիկ ու աշխարհը: Եվ նրա առկայությունից է, որ հենց մեզ շրջապատող աշխարհն առավել հիասքանչ է դառնում: Հեղինակի համար այդպիսի առանցք է մի դեպքում Շուշանիկը, մյուս դեպքում Ջավահիրը, հետո Աննան կամ բոլորովին ուրիշ մեկը:Ամեն անգամ, որևէ մեկին սիրելով, հեղինակը վերապրում է առաջին սիրո ցավն ու կորուստը.

Ուրտեղ սիրուն կին կտեսնեմ,

կնորանան դարդերրս.

Ու երբ անուշ երգ կլսեմ,

կըխորանան դարդերըս.

Սահման չունի,դարման չունին,

դադար չունին, չունին վերջ,

Ա՜խ, ծովեն՝ խոր, սարեն՝ ծանըր,

իմ դարդերըս, դարդերըս…

Ա՜խ, մահվան պես, սև մահվան պես,

իմ դարդերըս, դարդերըս…

Կին, որին ինքնամոռաց սիրում և որի մեջ շարունակում է փնտրել ու չգտնել այն միակին, եզակիին, որը կկարողանար փոխարինել բոլորին ,եթե լիներ իր կյանքում, լիներ այնպես և այնպիսին, ինչպիսին տեսնում ու երազում էր հեղինակը: Այս ամենի վկայությունն է նրա արձակ մի ուրիշ ստեղծագործություն, որից ուղղակի մեջբերումով ուզում եմ ավարտել խոսքս, և որը հեղինակի ապրուների ու տառապած հոգու ճիչն է, որ լսվում է և՛ սիրային բանաստեղության տողերից, և՛ նամակներից, և՛ հատկապես այս ստեղծագործությունից: Խոսքը «Լիլիթ»ը ստեղծագործության մասին է, որի մեջ հեղինակը հաստատում է կարծես այս ամենը .

««Եվա» էին հնչում նրա շրթները, սակայն «Լիլիթ» էր արձագանքում նրա հոգին:

Եվ երբ ճիգ էր անում Լիլիթին մոռանալու, գրկում էր հավատարիմ Եվային, կրծքին սեղմում և համբուրում - նա այդ ժամանակ Լիլիթին էր սեղմած տեսնում իր կրծքին, Լիլիթին համբուրում, Լիլիթին զգում, միայն Լիլիթին…

Եվ ապրեց Ադամը՝ սպասելով ու տենչալով միշտ Լիլիթին, և մեռավ Ադամը՝ հառաչելով ու երազելով մի՛միայն Լիլիթին…» (Ավ.Իսահակյան«Երկեր», էջ 208):

Սերը մշտապես ոգեշնչել, թռիչք ու ճախրանք է պարգևել անհատներին ու, հատկապես ստեղծագործող անհատներին: Այն երբեք չի դադարի հուզել մարդուն, նրա ներաշխարհը, նրա հոգին: Զգացմունք, որը ստիպում է ապրել, արարել, մարդուն վեր հանել իր մարդկային կարողությունների ու հնարավորությունների սահմաններից ու տանել աստվածային ոլորտներ, դարձնել նրան գերմարդ, բայց և կարող է մոխրացնել, տապալել անհասնելի բարձրություններից դեպի անդունդը, ոտնատակ անել, ոչնչացել, ամայացնել ու գերմարդուց

վերածել նրան ոչնչի: Իսահակյանի մոտ մարդկային զգացմունքները բյուրեղացման են հասնում, քնարերգության գոհարների վերածված, դառնում են մերը՝ անմիջական, չմիջնորդավորված, պարզ, բայց ոչ երբեք պարզունակ, խոր, լայնածավալ, անսահման օվկիանոսի նման, բայց զուլալ, կուսական, ջինջ աղբյուրի սառնորակ ջրի նման,դառնում են երգ ու տաղիկ,տառապած հոգու մրմունջ ու աղոթք: Այդ ամենն առավել հասկանալի է դառնում, երբ քնարերգությունն ու նամականին համադրում ենք իրար :

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԵՎ ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿՅԱՆ

Բացառիկ է բանաստեղծության դերը Իսահակյանի ստեղծագործության համակարգում: Այստեղ իրապես ի սկզբանե եղել է բանաստեղծությունը: Իսահակյանը ծնվել է բանաստեղծ. նա բանաստեղծություններ է գրել գրաճանաչությանն զուգընթաց: Գրական գործը նրա համար առաջին հերթին նշանակել է բանաստեղծություններ արարաել: Հիրավի, նա մտածել է բանաստեղծությամբ, ճանաչել է աշխարհը բանաստեղծությամբ, արտահայտել է իրեն բանաստեղծությամբ¦(Ավիկ Իսահակյան https://www.grakantert.am):

Ավետիք Իսահակյանը մուտք գործեց գրական ասպարեզ 1890 — 1895 թթ.:Նա իր հետ բերեց պոեզիա կենդանի, մտերմիկ խոսք՝ անմիջական,սրտաբուխ: Նրա բանասեղծությունների առաջին ժողովածուն՝ §Երգեր ու վերքեր¦ -ը(1898թ.), բացառիկ ջերմությամբ ընդունվեց ընթերցողի կողմից, որովհետև կենսունակ ու կենսատու լիցքեր էր պարունակում այն իր մեջ: Սիրուց տառապած ու դրա բովով անցած, թրծված մեկն էր խոսում և՛ իր քնարերգության տողերից, և՛ անձնական նամակներից: Այստեղ տեղին է և անհրաժեշտ անդրադառնալ բանաստեղծի մեծագույն սիրուն, ով կարելի է ասել դարձրեց բանաստեղծին այնպիսին, ինչպիսին որ է: Դրա վկայութնունն կարող է լինել բանաստեղծի հետևյալ տողերը.§ Ախ, Շուշիկի համար էի ապրում… կրթվում, սովորում, գրում, ձի հեծնում, շոր հագնում, տխրում, քեֆ անում, արտասահման թռնում, երազում միայն նրա համար… Երբ ես դեռ պատանի,երբ նոր աղջնակի սերը իմ կրծքում արձագանք տվեց, ես սիրեցի Շուշիկին, ես սիրեցի նրան,ինչպես իմ մայրիկին, ինչպես գեղեցկությունը, ինչպես հայրենիքիս կապույտ լեռները, իմ ողջ էությունը երգի ու երազի թևերով հյուսեցի նրա սիրելի էության հետ, ես երգեցի,մտորեցի ու լացեցի նրա համար, նրա համար միայն… ¦:

Շուշիկը բանաստեղծի մեծ ու անկրկնելի սերն էր, քնարերգության հերոսուհին, ում ողջ կյանքում սիրել, փայփայել, մեծարել, նվիրել է սիրառատ ու ջերմ տողերը, որոնք այսօր էլ հիացնում և պատվավոր տեղ են զբաղեցնում մեր և համաշխարհային գրականության սիրերգության գանձարանում: Շուշանիկ Մատակյանը Վարպետի Սանդուխտ մորաքրոջ թոռնուհին էր և հենց նրա համար էր խենթանում ու տառապում Իսահակյանը: Նա պատրաստ էր հանուն այդ սիրո ամեն ինչի:

Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր՝

Աչքերիդ մեջ շող ցանեմ.

Լուռ գիշերվա անուշ հովեր՝

Փունջ ծամերդ փայփայեմ:

Կուզե՞ս լինիմ վարդ – նազելի՝

Կրծքիդ վրա վառվռիմ.

Արշալույսի շողեր ոսկի

Դեմքիդ վրա փայփլիմ:

Կուզե՞ս լինիմ ծառ ու ծաղիկ՝

Քեզ գրկումս նինջ սփռեմ.

Թալուկ ստվեր, թովիչ թռչնիկ,

Օրոր ասեմ, օրորեմ:

Ինչ որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ,

Լինիմ երկինք ու երկիր,

Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին,

Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր…(էջ 5)

Այսպիսին է Իսահակյանը՝ կնամեծար, պատրաստակամ սիրելի մարդու համար ամեն ինչի, միայն նրան գոհացնի, միայն լինի այն փոխադարձ զգացմունքը, որի անհրաժեշտությունն ունենք ամեն մեկս:

Բանաստեղծը բաղձալի համբյուրի ու սիրելիի բուրմունքի մեջ անէանում է. իրեն կարծում է «աշխարքի տեր» ու տիեզերական հավերժության մի մասնիկ:

Թաթիկներրդ լուսեղեն-

Լույս-թրռչնիկներ դրախտի,

Ճաճանչներով ոսկեղեն

Բույն կհյուսեն նոր բախտի:

Զմրուխտ թասով գինի ես.

Բույրրդ աշխարք է առել.

Շուրթրս դիպավ շրթունքիդ

Աշխարքիս տերն եմ դառել:

Մազերրդ մեղմ փայելով՝

Ինքս ինձեն հեռացա,

Աչերիդ մեջ նայելով՝

Ողջ տիեզերքը մոռացա…

Սիրելիի հետ տիեզերական մի ամբողջություն լինելու ձգտումը ,մի փոքրիկ, բայց իրենց դրախտայն անկյուն ունենալու և ստեղծելու մարդկային ձգտման արտահայտությունն է նրա այս փոքրիկ, բայց շատ գեղեցիկ բանաստաղծությունը, ուր հեղինակը չի ակնարկում, հասցեական է խոսում իր երազանքի ու ցանկությունների մասին: Արազի ափին բոստանս լինի,Սալվի ուռ տընկեմ,վարդեր ու լալա, Հով ուռենու տակ քողտիկս լինի,-Օջախիս միջին կրակ բոցկլտա:Ու սրտով սիրած Շուշանս լինի,Օջախիս կողքին գուրգուրենք իրար.-Արազի ափին բոստանս լինի, Ծով-քրտինք թափեմ Շուշանիս համար: (էջ 9)

Հովվերգական մի սքանչելի պատկեր, անմիջական, բնության ու մարդու, մարդկայինի սերտ հյուսվածքում:

Սակայն միշտ չէ, որ մարդկանց ցանկությունները իրականություն են դառնում:Եվ ամեն բան այս դեպքում այնքան էլ պարզ ու փոխաարձ չէր: Ոտնահարված, տանջված ու տառապած հոգու տվայտանքների արտահայտությունն են Շուշանիկին ուղղված նամակի հետևյալ տողեր. «Նորից վեր եմ առնում գրիչս թաթախում եմ հիվանդ, արյունոտված սրտիս մեջ և գրում եմ քեզ Շուշիկ, մի քանի տող, գրում եմ ես՝ Ավետիք Իսահակյանս: Ինչո՞ւ եմ գրում, ի՞նչն է ստիպում ինձ գրել. սիրել- ես քեզ չեմ սիրում, ատել- ես քեզ չեմ ատում. բայց իմ հոգում կա՝ որպես մի ծանր երազ, որպես մի դժբախտություն, մի կոշմար. ես ուզում եմ քեզ հոշոտել, ես ուզում եմ քեզ հազար-հազար անգամ սպանել, նորից սպանել, կենդանացնել՝ նորից սպանել, հավիտյան ապրել և քեզ հավիտյան սպանել, բայց այդ չեմ կարող անել (անզոր եմ ես), ամբողջ էությունս բարի է… և որ ամենաողբալին է ես դեռ քու ճիրաններում եմ. ի՞նչ անեմ, ինչպե՞ս ազատվեմ. երբեմն քեզ ատում եմ ծովաչափ,և երբեմն սիրում եմ և պատրաստ եմ ոտքերդ համբուրելու, բայց որ հիշում եմ անցյալը, ես մրրիկ եմ դառնում: Դու մի՛ որոնիր այս տողերի մեջ որոշ միտք,որոշ իմաստ. ես գրում եմ համարյա կիսախելագար, և մինչև մահս քեզ էլ ոչ մի տող գրելու չեմ, և աչերիդ նայելու չեմ,Աստվա՛ծ է վկա. վերջին անգամ պիտի լամ քու առաջ և հայհոյեմ,-քու բոլոր սրբությունները, որովհետև դու իմ սրբությունները պղծեցիր, որովհետև դու ինձ չարչարեցիր, նահատակեցիր՝ անսահմանորեն: Բայց լալիս եմ հիմա, և սրտիցս արյուն է կաթում. գնա՛, Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրի՛ր քո երեխաների համար. ինձ մի՛ անիծիր. իմ անունս երբեք, երբեք մի՛ հիշիր և ոչ մի տեղ, և ոչ մի մարդու մոտ. աղաչում եմ քեզ. Ինձ թաղիր քեզ համար հավիտյան, ինձ երբեք մի՛ նայիր:Ազնիվ խոսք տուր այդպես վարվելու. ես թող բոլորովին չեղած, չծնված մարդ լինեմ քեզ համար: Հոգիս խորշում է, երբ մտածում եմ, որ երբեմն դու կմտաբերես ինձ. պետք չէ հիշել այն տաճարում մի ուրիշ Աստծո անուն, որին այդ տաճարը չի պաշտում, չի «հնազանդվում». չպետք է այդ տաճարում ուրիշ ձոնի սեղան ու պատկեր դրվի:Քո հոգու տաճարից թող ես լինեմ դուրս՝ ես օտար, չճանաչված եմ այդտեղ…

ԱՂԱՉՈՒՄ ԵՄ ՔԵԶ…

ԵՍ ԷԼ ԿՎԱՐՎԵՄ ՔԵԶ ՀԵՏ ԱՅԴՊԵՍ;

ԴՈՒ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵՌԱ՛Ր…

ԱՐՏԱՍՎԵԼՈՎ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՄ ՔՈ ԳԵՐԵԶՄԱՆԸ

ԵՎ ՃԱՄՓԱ ԵՄ ԸՆԿՆՈՒՄ

ՆՈՐ ԱՍՏՎԱԾ ԳՏՆԵԼՈՒ…

ԱՎԵՏԻՔ »:

Շուշիկը ամուսնանում է ուրիշ մեկի հետ: Դատարկվում է հոգին, որ լիքն էր սիրով, երջանկությամբ, դատարկվում է խոցված սիրտը , ու տեղը լցվում է դառը հիասթափությունը, խավարը, հուսահատությունն ու անտերության զգացումը:

Սիրեցի յարըս տարան.

Յարա տըվին ու տարան.

-Էս ի՞նչ զուլում աշխարհ է,

Սիրտս պոկեցին, տարան:

Ցավըս խորն է, ճար չըկա,

Ճար կա, ճար անող չըկա.

-Էս ի՞նչ զուլում աշխարհ է:

Սրտացավ ընկեր չըկա:

Լա՛վ օրերըս գնացի՛ն,

Ափսո՛ս ասին, գնացի՛ն.

-Էս ի՞նչ զուլում աշխարհ է:

Սև դարդերս մնացին… (էջ12)

Սրտի անափ տխրությանը մասնակից է դարձնում հեղինակը բնությանը և կանչում է իր հետ սգալու անդառնալի կորուստը:

Դա՛րդըս լացեք,սարի սմբուլ,

Ալվան-ալվան ծաղիկներ.

Դա՛ղրը լացեք, բաղի բլբու՛լ,

Ամպշող երկնուց զով-հովեր…

Երկինք-գետին գլխուս մթնան,

Անտուն-անտեր կուլամ ես.

Յարիս տարան-ջանիս տարա՜ն,

Հոնգուր –հոնգուր կուլամ ես…

Ա՜խ, յարս ինձի հանեց սըրտեն,

Անճար թողեց ու գընաց.

Սըրտիս սավդեն-խորունկ յարեն

Անդեղ թողեց ու գընաց:

-Էս ի՞նչ զուլում աշխարհ է:

Բայց որ Շուշանիկը իր բացակա ներկայությամբ շարունակեց մնալ հեղինակի հոգու խոր ծալքերում, որ երբեք և ոչ մեկը չկարողացավ նրա հանել, վանել բանաստեղծի հոգուց դա փաստ է: Այդ են վկայում Իսահակյանի բանաստեղծության այս տողերը:

Տարիներ հետո քեզ տեսա նորից,

Սիրտըս արտասվեց, բայց ժպտացի ես,

Նույն աղջիկն էիր՝ չքնաղ բոլորից,

Հոգուս մտերիմ, հարազատ այնպե՛ս:

…Սուտ է, նազելիս, չի զատել երբեք,

Երբեք չի զատել մեզ կյանքը դաժան.

Քո՛ւյր իմ, ամոքիր սիրտըս վշտաբեկ,

Տե՛ս, քոնն եմ ես միշտ, քո՛նն եմ հավիտյան: (էջ16-17)

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԵՎ ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆ

Տարիներ հետո հետո բանաստեղծը նորից պիտի ունենար նույն կամ գոնե նման ապրումներ, երբ սիրահարվեց Շուշանիկի քրոջը՝ Աննա Մատակյանին: Բանաստեղծը վախենում էր, որ այս դեպքում ևս խանգարողներ կլինեն և նամակներ էր գրել Շուշանիկին, Գեղամին ու Արիստակեսին, որ չխանգարեն իր և Աննայի հարաբերություններին: Ինքը իր հերթին փորձում էր «հոգին բանալ», ասել շատ ու շատ բաներ,«…խորապես զգում եմ, որ քեզ շատ և շատ սիրում եմ. և այս սիրուց շատ եմ վախենում, վախենում եմ, որ վերջնականապես չջարդվի սիրտս և նորա հետ հույսերս ու մնացած երազներս. այնպես ջարդվի, որ դիակ դառնամ ու չկարողանամ մի բան անել. և դրա պատճառը քու տարօրինակ վարմունքն է ինձ հետ… ես այնպես լալ եմ ուզում, և երեկ ինձ լացացրիր… քեզ էն գլխից խնդրեցի, որ ինձ հետ միանգամայն անկեղծ լինես. բայց դու մանավանդ դեպի ինձ դեռ ծածուկ ես ու գաղտնապահ ու սակավախոս. դու ինձ սիրում ես – ես չեմ կասկածում դրա մեջ… » («Համաշխարհանին սիրեգության նամականի», էջ 244):

Սակայն որոշակի ժամանակ էր անհրաժեշտ, որպեսզի բանաստեղծը հերթական հիասթափությունն ապրեր, տանջվեր, տառապեր, բայց, ուժեղ անհատականություն լինելով, պատվով դուրս գար այդ ամենի միջից:

…Խստապահանջ խնդրում ես ինձ

Նամակներդ ետ դարձնել.

Կատարում եմ ասպետորեն

Քմայքներիդ այս խաղն էլ:

Բայց համբույրներն այն սրտադող,

Որ ինձ տվիր ու առար,

Բնավ երբեք դու չես կարող

Ո՛չ ստանալ, ո՛չ ետ տալ:

Նրանք պիտի վառվեն անշեջ,

Պիտի կիզեն քո հոգին,

Ինչպես որ միշտ այրում են ինձ

Երջանկությամբ ցավագին: (Ավ.Իսահակյան «Երկեր», էջ 33)

Խոր հիասթափության և ոգով արի մարդու պատասխան են նամակի այս տողերը, որ ուղղված են Աննային. « … և ինչպես իմ կույր բախտն է, չար աստղս և դաժան ճակատագիրս, որ մի անգամ ճակատս պատռվեց ձեր անմարդասեր տան շեմքին, և տարիներ հետո, նորից եկա և ճակատս խփեցի ձեր նզզոված դռանը. միթե որոշված է, որ ձեր տունը պիտի լինի իմ կորստյան պատճառը, իմ գերեզմանը .ո՛չ, ո՛չ. Ավետիքը չպիտի մեռնի. նրա կյանքը նպատակ ունի. նրա ամեն մի օրը մի ամբողջ կյանք է և բովանդակություն, և թող տանջվի նա ու տառապի, վերջը կհաղթանակե » («Համաշխարհանին սիրեգության նամականի», էջ 260):

Եվ այդ անկոտրուն ,բայց և կոտրված սրտի արձագանքն են հետևյալ բանաստեղծության այս տողերը.

Բարև կուտամ, չես առնի,

Ոտքիդ կոխած հողն եմ, յար,

Սիրտըս անխիղճ մի ՛ ճմլի,

Չէ ո՞ր միջին դուն ես, յար:

Քանց սարյակի թևը սև

Իմ աչքերը շա՛տ են սև,

Աչքն էլ սրտի հայելին է,

Չէ՞ որ սիրտս էլ շա՛տ է սև:

(Ավ.Իսահակյան «Երկեր», էջ 15)

Բնության մի մասնիկ է մարդ ու նրա հետ դաշն է, ներդաշնակ է նա և ,երբ տխրությունն ու թախիծը պաշարում են , ու այնտեղ տեր են դառնում , դարձյալ մեկուսանալ ու բնությանը ձուլվել է ձգտում տառապած հոգին , իսկ այդ ամենն ավելի լավ զգացել և բանաստեղծության տեսքով վարպետորեն արտահայտել է Իսահակյանը:Մութը գետինն ու գետն է գրկել, չկան մարդիկ, չկա աղմուկ, իրարանցում, համատարած անդորր է ու ներդաշնակություն: Լսվում են

միայն հեղիկնակի տանջված սիրտի թույլ ու տկար զարկերը, որտեղ ո՛չ սեր, ո՛չ երգ, ո՛չ «արև-աչեր » կան:

Վառ աստղերը երկնից ընկան,

Վարդ ու շուշան թառամեց.

Ա՜խ, իմ կյանքս, անուշ կյանքս,

Կտոր-կտոր փշրվեց…

Հովն ու ալիք կուգան, կերթան,

Ցաված սիրս կշոյեն

Ու իմ սիրուս մրմունջներից

Տխուր երգեր կհյուսեն…

(Ավ.Իսահակյան «Երկեր», էջ 9)

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԵՎ ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանաստեղծին վիճակված չէր երջանիկ սիրո վայելում և դրա արձագանքն են նրա նամակի հետևյալ տողերը , որոնք այս դեպքում որևէ կապ չունեն ո՛չ Շուշանիկ Մատակյանի, ո՛չ Աննայի հետ: Այս անգամ նամակի հասցեատերը Ջավահիր Ներսիսյանն է, որի հետ ևս վիճակված չէր կիսելու երջանկության զգացումը: «Ես չեմ ուզում այդ բախտավորությունը, և թշվառությունը նվիրական է, և թշվառ լինել, կնշանակե ավելի բախտավոր լինել…»/«Համաշխարհային սիրերգության նամականի», էջ 235/:

Ավետիք Իսահակյանը Ջավահիր Ներսիսյան շատ նամակներ չի գրել, սակայն նրա հետ ևս եղել է մտերմիկ հարաբերությունների մեջ : Բայց Ջավահիրը նախապատվությունը տալիս է Լևոն Շանթին և ամուսնանում է նրա հետ:Այս դեպքում էլ դառնության զգացումը չի միախառնվում չարության հետ: Անդավաճան, փոխադարձ սիրո փնտրտուքը այս անգամ ևս դատապարտված էր, սակայն Իսաակյանն այնքանով է ինքն իրենից բարձր, որ չի չարանում, չի դառնում դաժան, քարսիրտ մեկը ու չի անիծում նրան: Ահա թե ինչ է գրում հեղինակը իր այս նամակում ուղղված Ջավահիր Ներսիսյանին. «…Երթաս բարև, երթաս բարև, ուր որ լինես՝ արևդ կանաչ լինի.երբեք չտխրիս. արցունքի կարոտ մնաս. միշտ առողջ լինիս և խաղաղ քնիս. փորձանքից ազատ մնաս. չխաբվիս և չխաբես. մաքուր սիրես, մաքուր սիրվիս, բայց ամենից առաջ ինձ մոռացիր..» …»/«Համաշխարհային սիրերգության նամականի», էջ 238-239/:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը նպատակ ունի զուգահեռներ անցկացնելով հեղինակի քնարերգության և նամականու միջև բացահայտել գրողի ներաշխարհը, ապրումները ու դրանց արտահայությունն արձակ և չափածո ստեղծագործություններում ,նպաստել ինքնուրույն համադրելու, զուգահեռներ անցկացելու միջոցով ավելի խորը ծանոթանալուն հեղինակի տիեզերական և համապարփակ սիրուն ու տառապանքի ակունքներին: Յուրաքանչյուր վերանագիր ներկայացնում է հեղինակի հոգում բռնկված վսեմագույն զգացմունքն իր հիացմունքի ու տառապանքի տարաբնույթ դրսևորումներով:Այն կնպաստի Ավ. Իսահակյանի արձակ ու չափածո քնարերգության համեմատական ուսումնասիրության ժամանակ:Համեմատական զուգադրության մեջ առավել մանրամասնորեն ու խորությամբ են ներկայացվել մարդ և բանաստեղծ Իսահակյանն իրական կյանքում ու արվեստում:

Միայնությունից, հուսալքումից,տառապանքից ու ինքնապահպանման բնազդից ծնունդ առած բանաստեղծական գոհարների խտացում դարձան հեղինակի քնարեգության հրաշք մասունքները, որոնք մի դեպքում մխիթարություն են ,մի դեպքում ցասում, մի այլ դեպքում հիացմունք կամ հիասթափություն,որոնք ունեն իրենց արտացոլք նամակաները, ուր հեղինական առավել անկեղծ ու անսփոփ մորմոքում է կորցրած սիրո համար, կիսվում իր մտերիմների ու հարազատների հետ:Իր հոգու խորքերից զտված ամոքիչ ու կենարար աղբյուրի նման հորդում են հոգին ամբողջովին կլանած սիրո զեղումները ուղղված իր մեծագույն սեր Շուշանիկին,հետո արդեն Աննային, Ջավահիրին…

Էական է, որ բանաստեղծի տանջված ու տառապած հոգին անչար ու չափազանց բարի է իր քնարական էջերում ,որոնցից շատերը հետագայում հեշտությամբ վերածվեցին ուրիշների սիրուց տառապող հոգիները մխիթարող ու սփոփող երգեր: Իսկ հեղինակի նամակները բանաստեղծական շնչով,ցասումով ու պատկերավորությամբ են աչքի ընկնում:Զարմանալի ինքնատիպ, չկրկնվող ու զգացմունքային են բանաստեղծի նամակները լի մարդկային տարաբնույթ զգացումներով,կենդանի ու թրթռուն ինչպես գրող ինքն է ու իր քնարը:Անհնար է չնկատել նամակների ու բանաստեղծությունների խիստ անձնական և միաժամանակ համամարդկային լինելը,ուր ամեն բառում ու պատկերում դրսևորվում է Իսահակյանի հանճարեղությունն ու անկրկնելությունը:

Գրականության ցանկ

1.Ավետիք Իսահակյան «Երկեր», Երևան«Սովետական գրող»,1987թ

2. Համաշխարհային սիրերգության նամականի,Եր.Սփիւռք,1992թ.

3. Ավիկ Իսահակյան «Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները», https://www.grakantert.am

4.Ավիկ Իսահակյան «Ավետիք Իսահակյանգիտական կենսագրությունը»,ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, Երևան,2000թ